ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ապրիլի 2024թ. թիվ 222-Ա

ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՏԱՐՈՒՄԸ Տ.ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշման հավելվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2024 թվականի ապրիլի 15-ի թիվ 213-Ա որոշումը և հաշվի առնելով Տ.Հովսեփյանի համաձայնությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Գ.Չաուշի անվան թիվ 24 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումը, մինչև մրցույթի արդյունքում տնօրենի ընտրությունը, դնել «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Գ.Չաուշի անվան թիվ 24 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Տաթևիկ Արամի Հովսեփյանի վրա:

2. «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Գ.Չաուշի անվան թիվ 24 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

«ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Գ.Չաուշի անվան թիվ 24 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված տնօրենի լիազորությունների իրականացման համար Տ.Հովսեփյանին տալ լրավճար «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Գ.Չաուշի անվան թիվ 24 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի աշխատավարձի 30%-ի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի ապրիլի 22-ից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

19/04/2024

X

ԱՐԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

Ա.ՂԱՋԱՐՅԱՆ

2024թ. ապրիլի 19
ք.Վանաձոր